ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾՆՈՂՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սկսած 2019թ. հուլիսի 1-ից

TK/K-12 ընդունված աշակերտներից պահանջվում է՝

- **Դիֆթերիա, Կապույտ հազ և Փայտացում (DTaP, DTP, Tdap կամ Td) — 5 դեղաչափ**
  (4 դեղաչափն ընդունելի է, եթե մեկը ստացվել է 4 տարեկանից հետո։
  3 դեղաչափն ընդունելի է, եթե մեկը ստացվել է 7 տարեկանից հետո։)
  7-րդ-12-րդ դասարանների համար՝ փայտացման դեմ պատվաստանյութի առնվազն 1 դեղաչափ 7 տարեկանից հետո։
- **Պոլիո (OPV կամ IPV) — 4 դեղաչափ**
  (3 դեղաչափն ընդունելի է, եթե մեկը ստացվել է 4 տարեկանից հետո)
- **Հեպատիտ B — 3 դեղաչափ**
  (Չի պահանջվում 7-րդ դասարան ընդունվելու համար)
- **Կարմրուկ, Խոզուկ և Կարկրախտ (MMR) — 2 դեղաչափ**
  (Երկուսն էլ պետք է տրված լինի 1 տարեկանից հետո)
- **Ջրծաղիկ — 2 դեղաչափ**

Պատվաստումների այս պահանջը կիրառվում է բոլոր դասարաններ նոր ընդունվողների և տեղափոխվողների վրա, ներառյալ անցումային մանկապարտեզը։

7-րդ դասարան ընդունված աշակերտներից պահանջվում է՝

- **Կապույտ հազ, Դիֆթերիա, Փայտացում (Tdap) —1 դեղաչափ**
  (Կապույտ հազի խթանիչը հիմնականում տրվում է 11 տարեկանում)
- **Ջրծաղիկ — 2 դեղաչափ**
  (Հիմնականում տրվում է 12 ամսականում և 4-6 տարեկանում)

Բացի այդ, TK/K-12 պատվաստումների պահանջները վերաբերում են 7-րդ դասարանցիներին, ովքեր՝

- Մինչև 2016թ. անցումային մանկապարտեզից/մանկապարտեզից մինչև 6-րդ դասարան ընդունվելիս ներկայացրել են վավեր անձնական հավատամքի վրա հիմնված բացառում
- Նոր են ընդունվում

Գրառումներ.

Կալիֆորնիայի դպրոցներից պահանջվում է ստուգել անցումային մանկապարտեզից/մանկապարտեզից մինչև 12-րդ դասարան նոր ընդունվող բոլոր աշակերտների, ինչպես նաև 7-րդ դասարան տեղափոխվող բոլոր աշակերտների պատվաստումների մասին գրառումները՝ նախքան ընդունվելը։ Որպես պատվաստումների ապացույց, ծնողները պետք է ցույց տան երեխայի պատվաստումների մասին գրառումները։